

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	Վառելիքի և քսուքների հետ կապված աշխատանքների համակարգող
ՎԵՐԱԴԱՍԸ՝	Տեխսպասարկման գծով մենեջեր
ԺԱՄԿԵՏԸ՝	Երկարաժամկետ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ՝	Ամուլսար, Վայոց Ձոր
ԱՍՏԻՃԱՆԸ՝	

ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վառելիքի և քսուքների հետ կապված աշխատանքների համակարգողից պահանջվում է ապահովել նավթամթերքների, այդ թվում բենզինի և վառելիքի, պատշաճ բեռնաթափումը, պահեստավորումն ու առաքումը: Տվյալ անձը պատասխանատու է փաթեթավորված, տարաներով կամ մեծ ծավալով, չտեսակավորված նավթամթերքների վերահսկման, կառավարման, ընդունման, պահեստավորման, անվտանգության և առաքման համար: Դա ներառում է հետևյալ աշխատանքները. վառելիքի պահեստավորման բաքերը լցնելու համար նախատեսված հատուկ պոմպերի և օժանդակ սարքավորումների շահագործում, ամենօրյա փորձարկման համար նավթամթերքների նմուշների ընտրում և ներկայացում, բենզինի և ջրի հաշվառում, բենզինի նմուշների ստուգում աղտոտման մակարդակը որոշելու նպատակով, հատուկ սարքավորումների տեխսպասարկում և վերանորոգում, վառելիքի կառավարման մատյանների/թերթիկների լրացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Իրականացնել տեղամասում սարքավորումների յուղման աշխատանքների ստուգումներ և համապատասխան հանձնարարականներ տալ սպառողներին
- Մշակել սարքավորումների յուղման աշխատանքների սխեմաներ՝ ընտրելով ճիշտ արտադրանք և ճշգրիտ ծավալներ ու բաշխման համակարգ, ինչպես նաև ապահովելով անհրաժեշտ էներգոարդյունավետություն
- Ներկայացնել նմուշների անալիզների վերաբերյալ առաջարկություններ
- Կազմակերպել անհրաժեշտ դասընթացներ սպառողների և տեխնիկական աշխատողների համար
- Խոհրուրդներով աջակցել խնդիրների վերացմանը և, ըստ անհրաժեշտության, համապատասխան մասնակցություն ցուցաբերել
- Խթանել սարքավորումների յուղման լավագույն փորձի կիրառումը տեղամասում՝ նպաստելով «WP Engineering Services» ընկերության առաջարկի աճին
- Մշակել ծրագրի իրականացման պլաններ և աջաջադրանքներ տալ տեխնիկական թիմին
- Պատշաճ կերպով ներկայացնել ընկերությունը մատակարարների, սպառողների և աշխատակիցների հետ շփվելիս
- Ապահովել անվտանգության, փաստաթղթերի և վերապատրաստման պահանջների կիրառումը աշխատակիցների կողմից, ինչպես նաև ապահովել աշխատանքների իրականացումը հնարավորինս բարձր չափանիշներով՝ համաձայն ընկերության ISO9001 ընթացակարգերի
- Իրականացնել այլ գործողություններ արդյունաբերական քսուքների արդյունավետության բարձրացման համար՝ աջակցելով առաջադրանքների պատշաճ իրականացմանը
- Ստուգել, փորձարկել, ընդունել և ապահովել վառելիքի, քիմիական ռեագենտների և քիմիական այլ նյութերի մատակարարումը, մշտադիտարկել դրանց օգտագործումը, ինչպես նաև ապահովել անվտանգության չափանիշների կիրառումը և լրացնել մատյաններն ու կատարել անհրաժեշտ գրառումներ
- Նմուշներ վերցնել, չափումներ իրականացնել և չափել առաքման բեռնատարների և պահեստավորման բաքերի ջերմաստիճանը՝ օգտագործելով ընկերության և API Ամերիկյան նաֆթի ինստիտուտի ընթացակարգերով սահմանված մեթոդները
- Հաշվարկել և զեկուցել փոխանցված քանակությունների վերաբերյալ և համեմատել հաշվարկները
- Պատշաճ կերպով լրացնել բոլոր հաշվետվություններն ու ձևաթղթերը, այդ թվում՝ կարգագիր-

թույլտվության հետ կապված փաստաթղթերը և տեխնապասարկման համար անհրաժեշտ բոլոր նյութերի պատվերները

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- Միջնակարգ կրթություն վկայական
- Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ կամ ուսման/ բենզինի, նավթի և քուրքների թեմայով տեխնիկական դասընթացների համատեղում
- Վտանգավոր թափոնների հետ կապված աշխատանքների և արագ արձագանքման կամ հարակից ոլորտում աշխատանքի արտոնագիր
- Գրավոր և բանավոր հաղորդակցվելու կարողություններ
- Ծանրաբեռնվածության և ժամանակի սղության պայմաններում աշխատելու ունակություն
- Ուշադրություն մանրուքների նկատմամբ
- Գույքի վերահսկման և գույքագրման համակարգերի վերաբերյալ գիտելիքներ

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հետաքրքրված բոլոր թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրությունն (ռեզյումեն) ուղարկել հետևյալ հասցեով՝ hr@lydianinternational.co.uk Նամակի 'Subject' տողում անհրաժեշտ է նշել պաշտոնը: Միայն վերջին փուլ անցած (կարճ ցուցակում ընդգրկված) թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

12-ը Փետրվարի, 2018թ.

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

26-ը փետրվարի, 2018թ.